ՆՈՐ ԿՅԱՆՔ ԱՐՑԱԽԻ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Շուրջ 14 000 քմ ջերմոցային տնտեսությունների ապահովում անհրաժեշտ համակարգերով՝ արդյունավետությունը բարձրացնելու և ամբողջ տարվա ընթացքում բերք ստանալու համար:

Շրջափակման մշտական սպառնալիքի պայմաններում Արցախի համար հրատապ անհրաժեշտություն է դառնում սեփական պարենամթերքի արտադրության արդյունավետության բարձրացումը:

Արցախում տարվա ընթացքում մի քանի ամիս կայուն գործող մի քանի տասնյակ համեմատաբար խոշոր ջերմոցային տնտեսություններ կան, որոնք համապատասխան սարքավորումներով հագեցվածության պայմաններում կարող են կտրուկ ավելացնել իրենց արտադրանքը:

ԽՆԴԻՐՆԵՐ

- Արցախի պարենային անվտանգության աստիճանի բարձրացում՝ ընդլայնելով առաջնային անհրաժեշտության մթերքների արտադրությունը:
- Օգնություն կայուն գործող և իրենց մրցունակությունն ապացուցած ջերմոցային արտադրողներին՝ իրենց արդյունավետությունը բարձրացնելու համար:
- Ջերմոցային տնտեսությունների հագեցում հովացման, խոնավացման, լուսավորության, ջեռուցման, ոռոգման և պարարտացման համակարգերով՝ համատեղ ֆինանսավորման և մարման սկզբունքների հիման վրա:
- Ծրագրի շարունակականության ապահովում՝ ստացված միջոցներն ուղղելով նույն պայմաններով գյուղացիական նոր տնտեսությունների վերազինմանը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործընկեր	**Արցախի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարություն, Արցախի գյուղի և գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ)**
Աշխարհագրություն	**Արցախ, բոլոր շրջանները**
Իրականացման ժամկետ	**Առաջին փուլ՝ 9 ամիս, այնուհետև՝ մշտական**

ԲՅՈՒՋԵ

Ֆինանսավորման սկզբունքը - **50%**-ը սուբսիդավորում է «Մենք ենք մեր սարերը» ՏԶԳ-ն, **5%**-ը վճարում է տնտեսության սեփականատերը, **45%**-ը վերադարձնում է 5 տարվա ընթացքում՝ հավասար վճարումներով: Վերադարձված գումարները կուտակվում են Հիմնադրամում՝ նույն պայմաններով նոր ջերմոցների ֆինանսավորման համար:

Ջերմոցների կահավորման հաշվարկային արժեքը 1 քմ.-ի համար առանց ԱԱՀ-ի՝ **20 ԱՄՆ դոլար**, որից **1 ԱՄՆ դոլարը** վճարում է ջերմոցի սեփականատերը, **19**-ը՝ Հիմնադրամն իր հավաքագրած միջոցներից:

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 266.000 ԱՄՆ ԴՈԼԱՐ

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- **Անմիջական շահառուներ՝** ոլորտում գործող ավելի քան 60 ջերմոցային տնտեսություն
- **Անուղղակի շահառուներ՝** Արցախի ողջ բնակչությունը, որն ապահովվում է բանջարեղենի և գյուղատնտեսական այլ կուլտուրաների հայրենական արտադրությամբ

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

- **Հիմնվում է կայուն, պրոֆեսիոնալ գյուղատնտեսական արտադրություն:**
- **Բարձրանում է Արցախի պարենային անվտանգության աստիճանը**